



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՅ**

«24» *հոկտեմբեր* 2016 թ.

№ *2/1759-4*

Հ Ր Ա Մ Ա Ն

**Ա.ՎԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՋԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 25/2016 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Արաբկիրի հարկային տեսչության ընթացիկ հսկողության բաժնի պետ Արշակ Կարապետյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.
 - սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ